



ԳԵՈԹԻՄ

ԳԵՈԹԻՄ ՓԲԸ Անասնաբուծություն, ապրիլ 2014, էջ 1



LYDIAN
INTERNATIONAL

Տնտեսապես ձեռնտու ավանդույթների վերականգնում

«Գեոթիմ»-ի աջակցությամբ Գորայքում մարտից մեկնարկել է խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմավորման ծրագիրը: Ծրագրի ղեկավարը հարևան Մասնակունքի անասնաբուժական կենտրոնի տնօրեն Սուրեն Վարդանյանն է: Ծրագիրն իրականացվում է ժամանակակից սարքավորումներով ու տեխնոլոգիայով, գյուղի 2 անասնատեխնիկ վերապատրաստվում են որպես արհեստական սերմավորման մասնագետներ: Արհեստական եղանակով արդեն սերմավորվել է 97 գլուխ անասուն,

իսկ նոյեմբերին սպասվում է առաջին հորթուկների ծինը: Մեղմսավորման համար օգտագործվում է Միացյալ Նահանգներից ներկրված գենետիկական բարձր հատկանիշներով, մթերատու անասունների սերմնահեղուկ: Գյուղի 78 ֆերմերներ ընդգրկվել են դասե-



րին՝ սովորելու անասունների խնամք, հղիության ստուգում, հիվանդությունների կանխարգելում: Ընկերությունը Ծրագրի սահմաններում տրամադրել է արհեստական սերմնավորման նորագույն սարքավորումներ. ծննդօգնության սարք, հեղուկ ազոտ, միանգամյա օգտագործման հիգիենիկ և բժշկական պարագաներ, արտահագուստ, և այլն:



Անասնաբան տեխնիկ Արմեն Հովհաննիսյանի կարծիքով՝ եթե նախկինում հորթը վաճառում էին 30 հազար դրամ, հիմա 70 հազարով են վաճառում, ու գնորդները շատ են: «Մեր գյուղացիներին օգուտ ենք տալիս, սերմնավորում ենք, բարձր մթերատու կենդանիներ ենք ստանալու այս աշնանը: Լավ ծրագիր է, շնորհակալություն Գեոթիմին»:



Արհեստական սերմնավորման հաջող մեկնարկ Գորայքում

Ծրագրի ցուցանիշները խոստումնալից են

Սուրեն Վարդանյանը լրագրողների հետ հարցազրույցի ժամանակ նշեց. «Գորայքում նորմալ անասնազխաքանակ չունեն, շատ ցածր մթերատու կենդանիներ էին, որ տարեկան 1500-2000 լիտր կաթ էին տալիս: Մպասվող սերունդը կրկնապատիկ կաթ կտա: Անասնապահությունը Գորայքի բնակիչների համար ապրուստի կարևոր աղբյուր է. այս առումով այս ծրագիրը մեծ աջակցություն է ֆերմերներին: Ծրագրի շահառուները

78-ն են, սակայն անասուն ունեցող ոչ մի ընտանիք չի անտեսվի. ամեն տան 2 կով անվճար կսերմնավորվի:

Այս տեխնոլոգիայով ծնված անասունները հենց առաջին օրից ֆերմերին օգուտ են: Այս գեղային հորթերին գյուղացին չի վաճառի, կպահի, կբազմացնի և անասնաբուծությունը կզարգանա: Սա ապացուցում է, որ գյուղատնտեսությունն ու հանքարդյունաբերությունը համատեղելի են»:

Ամբողջական հոդվածը տես <http://168.am/2014/04/26/358307.html>



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ՝

Արհեստական սերմնավորում Գորայքում 1


Գորայքում շուտով կգործի բարեկարգված բուժկետ 2



Այցելեք Գորայք ու գրուցեք մարդկանց հետ այնտեղ իրականացվող ծրագրերի մասին. կհամոզվեք, որ նրանք կիսելու և պատմելու շատ բան ունեն:

Ֆերմերները կպատմեն ջերմոցների մասին, անասնապահները ոգևորված կներկայացնեն արհեստական սերմնավորման ծրագիրը, մյուսները կպատմեն ներկայումս Գեորգիմ Ընկերության կողմից Գորայքի բուժկետի հիմնովին վերանորոգման մասին:

Կարճ հարցազրույցի ժամանակ առողջության կենտրոնի տնօրեն Կարինե Հարությունյանը վկա-



յեց, որ 2009 թվականին բուժկետի շենքն ամբողջությամբ վերանորոգվել է և կահավորվել է, սակայն տարածքի բնակլիմայական պայմանների պատճառով մեկ տարի անց խոնավությունից շենքի պատերը բորբոսի շերտով են պատվում և այդ պայմաններում դժվար է անգամ դեղորայքի պահպանումը:

Ձմռանն այս շենքում անհնար է աշխատել ցրտից, ուր մնաց ընդունել հի-

ԳՈՐԱՅՔ

վանդներ, երեխաներին պատվաստում կատարել կամ որևէ պրոցեդուրա իրականացնել: Մինչդեռ տարիներ առաջ առողջության այս կենտրոնը սպասարկել է հարակից չորս գյուղերի բնակչության:

Այս տարի Ընկերության միջոցներից բացի, գյուղապետարանը նույնպես ներդրում կունենա շենքի բարելավմանը. միացյալ ռեսուրսներով կապահովվի շենքի ջեռուցումը, կկազմակերպվի պատշաճ ջրհեռացում, որպեսզի շենքը բարեկարգվի այնպես, որ երկար ծառայի համայնքին ու նրա կարիքներին:

Սակայն սա դեռ ամենը չի. վերանորոգման այս տարվա ծրագիրը մի շատ կարևոր նվեր կմատուցի Գորայքի բնակչությանը:

Բուժկետի մի մասը կվերածվի ատամնաբուժարանի և առաջին անգամ գյուղում կգործի նոր ու շատ պետքական ծառայություն: Կտրամադրվեն համապատասխան սարքավորումներ, պարագաներ և կահույք: Բացի բուն ատամնաբուժարանից, կլինի նաև բժշկի և բուժքույրի սենյակ և ատամնաբուժարանի համար սանհանգույց:

“Գյուղի համար չափազանց կարևոր ու շնորհակալ գործ է, ծառայություն, որ գյուղում երբեք չի եղել: Մարդիկ

ստիպված են գնալ հարակից ավաններ ու քաղաքներ պրոբլեմի դեպքում, որը ծախսատար է, ժամանակ է պետք և կազմակերպելն էլ դժվար է”, շարունակում է բժշկուհի Կարինեն:



Ծրագրի համակարգող Արթուր Մակարյանը օգտագործում է տեղի մարդկային ռեսուրսները վերանորոգման աշխատանքներում:

Նրա կարծիքով մոտ երկու ամսից շինարարական աշխատանքները կավարտվեն, իսկ ամռան ընթացքում Ընկերությունը կհոգա ատամնաբուժարանի աշխատանքների մասին:



Գյուղապետարանի աշխատակազմի ղեկավար Մարիետան նշում է, որ «Անուլսարի հանքն աշխատեցնելու դեպքում գյուղացիներն արտերկիր չէին մեկնի. հանքի շահագործումը հատկապես կարևոր է երիտասարդների համար - երբ նրանք աշխատանք են ունենում, հայրենիքը լքելու կարիք չի լինում»: